




«ԹՈՂ ՏՈՒՔԻ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ» ԳՈՒԿ. ԵԸ. 16.

ՀԱՏՈՐ Զ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ. ՀՈԿՏԵՄԲԵՐ 1. 1877.

ԹԻՒ 10.



«ԱՌԻՒԾ ԵՐԻ ՈՐՈՐԴՆԵՐԸ ՏԵՍԱՒ, ԹԿԱՒ ԱՆՈՆՑ ՆԱՅԻԼ»

ԱՌԻՒԾ ՈՐՈՐԴ
 Կ'ըսուի թէ առիւծ որալ շատ զուարճալի է, բայց մեծ զգուշու թիւն պէտք է առիւծին որս չըլլալու համար:

Ափրիկէի մէջ Բարեյուսոյ գլխոյ կողմերը մտներս Անգղիացի որսորդներ փորձով սորվեցան թէ առիւծ որսալու համար որչափ մեծ զգուշու թիւն և արթնութիւն պէտք են:

Այս որսորդներն ութ հոգի էին, և իւրաքանչիւր մէյմէկ ընտիր հրացան առնելով ուրախութեամբ գացին դէպ անտառներն ուր կը յուսային առիւծ գտնել: Որսորդները թաւուտ

անտառի մը մտեցան, և հոն առիւծ գտնել հաւանական համարելով, որոշեցին իրենց մէջէն երկու հոգի անտառը զրկել, իսկ մնացեալ փեցն անտառէն դուրս կը սպասէին :

Երբ երկու որսորդներն անտառը կը մտնէին, Մր. Սթրոնկ անուն հմուտ որսորդը խրատ տուաւ անոնց չորս դին աղէկ դիտել, և զգուշութեամբ վարուիլ : Երկու որսորդները շուտով անցյալ եղան անտառին մէջ :

Անտառէն դուրս գտնուող ընկերները բաւական ատեն սպասեցին ետքը, երբ ձայն չլսեցին անտառէն, սկսան վարանիլ, նա մանաւանդ անոնց մտնող սիրտը քան զտուրապանն ու ելի արագ բազկի սկսաւ : Այս միջոցին անտառին մէջ հրացան մը պարպուեցաւ, յետոյ ուրիշ մը, քիչ մը ետքը մացառներուն մէջ ձայն մը լսուեցաւ, որպէս թէ անտառէն մէկը դուրս կու գար, և իսկոյն անտառը մանող որսորդներէն մին երեւեցաւ պատուաւ զգեստներով և մեծ առիւծէ մը հալածեալ : Արիւնէն որ առիւծին կողքէն կը վազէր՝ յայտնի էր թէ առիւծը վիրաւորուած էր : Գազանը չէր կարծեր թէ դուրսը վեց զինեալ մարդոց պիտի հանդիպէր, ուստի երբ որսորդները տեսաւ, կանգ առաւ, և սկսաւ անոնց նայիլ իբր թէ որոշելու համար թէ նախ որուն վրայ յարձակելու էր :

Անտառէն դուրս սպասող որսորդը, իսկ և իսկ իրենց հրացաններն արձակեցին առիւծին վրայ :

Հուտ որսորդը Մր. Սթրոնկ միայն լեցուն պահեց իր հրացանը : Մր. Սթրոնկ դիտմամբ այսպէս ըրաւ, և թէ անոր այսպէս ընելը որչափ օգտակար եղաւ միտնեալ, անմիջապէս տեսնուեցաւ : Միւս հինգ որսորդը առ փութի չկրցան իմաստ վիրաւորել առիւծը, որ քանի մը տեղէն թեթիւ կերպով միայն զարնուած ըլլալով կտաղեցաւ, և ահագին մալուխ մամբ նետուեցաւ որսորդներէն մէկուն վրայ : Մր. Սթրոնկ այս տեսնելով առանց յայտնելու արձակեց իր հրացանն առիւծին վրայ, որ մալուխով զետին ինչու մեռեալ : Որսորդներն իսկոյն անտառը մտան իրենց միւս ընկերը փնտռելու, և գտան որ ճշտապատ ինչպէս էր և մէկ բազուկը խորտակած էր առիւծին ահագին ճիւղներէն :

Որսորդներն առիւծին մորթը հանեցին, իրենց վիրաւոր ընկերն ալ առնելով գարձան իրենց վրանները,

ուրախ ըլլալով որ առիւծ մեծ վտանգի չհանդիպեցան :

“ՈՒՐԻՇՆԵՐՆ ԻՆՉ ՊԻՏԻ ԸՍԵՆ”

Օր մը կարապետ Քրիստոնեայ ըլլալ կը խրատէր Յովհաննէս անուն ազնուաբարոյ տղայ մը, որ կը փափաքէր բարի մարդ ըլլալ : Յովհաննէս իր խաղի ընկերները կարապետին ցուցնելով ըսաւ. “Եթէ ես Քրիստոնեայ ըլլամ, ասոնք ի՞նչ պիտի ըսեն :”

Կարապետ ըսաւ. “Հոգ մի ըներ թէ անոնք ինչ պիտի ըսեն, դուն ինչ ընել որ քեզի պարտք կը ճանչնաս, զայն ըրէ. մի վարանիր հոգ ընելով թէ ուրիշներն ինչ պիտի խորհին կամ ի՞նչ պիտի ըսեն :”

Կարապետ իրաւունք ունէր այսպէս խօսելու : Ծատեր կան որ խորհելով թէ ուրիշներն ինչ պիտի ըսեն եթէ իրենք Քրիստոնեայ ըլլալու ջանան, չարութեան մէջ կը շարունակեն : Զարմանալի է որ այսպիսի տղայք հոգ չեն ըներ թէ բարի մարդիկ ինչ պիտի խորհին կամ ինչ պիտի ըսեն անոնց համար, եթէ անոնք շարունակ մեղաց մէջ մնան :

Այսպիսի տղայք ինչու չեն հարցնէր արդեօք. “Մնողքս ինչ կը խորհին ինծի համար. Աստուած ի՞նչ կը խորհի :” Խնդիրը մարդոց ինչ խորհիր կամ խօսիր մտածել չէ, այլ խորհիլ թէ որն է ուղիղը : Ուղիղը գործել միշտ դիւրին չէ, բայց միշտ ապահով է, և միակ ապահով ճամբան ուղիղ գործելն է : Ուղիղը գործել գոհուար է, բայց Աստուած կ'օգնէ անոնց որ կը ջանան ուղիղ ճամբուն մէջ քալել :

Դիցուք թէ այլք զմեզ կը ծաղրեն և մեր վրայ կը խնդան, վասն զի Քրիստոնեայ ենք. Գիտաւ որո՞ւ կ'ըլլայ. անտարակոյս անոնց որ զմեզ կը ծաղրեն : Արդարեւ հաճելի բան չէ ուրիշներու ծաղրուն նշաւակ ըլլալ, բայց մենք այսպիսի բաներու համար չենք խորհիր անգամ մը թէ ուրիշներն որչափ հալածանք և չարչարանք կրեցին Քրիստոսի սիրոյն համար, պիտի տեսնենք որ մեր ծաղրուելը թեթեւ բան է :

“Երանի անոնց որ հալածուած են արդարութեան համար, ինչու որ երկնից թագաւորութիւնը անոնցն է :

Երանի է ձեզի՝ երբոր կը նախատեն ձեզ ու կը հալածեն, և սուտ տեղը ամէն կերպ գէշ խօսքեր կը

խօսին վրանիդ ինծի համար” (Մատթ. Ե. 10, 11) :

Թէ Ինչպէս Գրեւորի Ե ՆԱՄԱԿ

Մր. Բոպինսոն իր աղջկան Սարայի նամակ գրելու եղանակը սորվեցընելու համար ձեռքը թուղթ և գրիչ առնելով ըսաւ անոր. “Ինչ գրել որ կ'ուզես, ինծի ըսէ, ես կը գրեմ” :

Սարայ պատասխանեց. “Չգիտեմ թէ ինչ գրելու է :”

Մր. Բոպինսոն ըսաւ. “Այսպէս գրե՛նք. Սիրելի Գէորգ, անակնկալ պատահմամբ այս գիշեր մեր առուն այրեցաւ” :

Սարայ պատասխանեց. “Ոչ, այսպիսի բան չի գրուիր, վասն զի ճշմարիտ չէ” :

Սարայի այս պատասխանին վրայ Մր. Բոպինսոն ըսաւ. “Աղէկ, նամակ գրելու կանոններէն մին ահա այս է. նամակին մէջ չգրել բան մը որ ճշմարիտ չէ : Բայց, Սարայ, կ'ուզե՞ս որ այսպէս գրեմ. “Սիրելի Գէորգ, քառորդ մը կայ որ կատուն իր պոչին հետ կը խաղայ” այսպէս կրնա՞նք գրել :”

Սարայ պատասխանեց. “Ոչ, այդ ալ գրուելու արժանի բան չէ” :

Մր. Բոպինսոն հարցուց. “Ինչու՞ համար գրուելու արժանի բան չէ :”

Սարայ պատասխանեց. “Գէորգին ի՞նչ փոթ թէ մեր կատուն իր պոչին հետ կը խաղայ” :

Մր. Բոպինսոն ըսաւ. “Աղջիկս, շատ աղէկ խօսեցար : Նամակ գրելու կանոններէն մին ալ ահա այս է. նամակին մէջ ուշադրութեան արժանի բաներ գրուելու են, որպէս զի ընթացողը գոհ ըլլայ զանոնք լսելով : Արդ, այսպէս գրե՛մ. Սիրելի Գէորգ, անտարակոյս ուրախ պիտի ըլլաս, երբ լսես թէ Մարիամ ծաղիկ հիւանդութիւնն անվտանգ անցուց : Այսպէս գրել վայելու է :”

Սարայ պատասխանեց. “Այո, այսպէս գրենք : Անտարակոյս Գէորգ ուրախ պիտի ըլլայ, երբ այս բանը լսէ” :

Մր. Բոպինսոն դարձեալ հարցուց. “Այսպէս գրե՞նք. փոքր եղբայրս շատ անառակ է, և այսօր պատժուեցաւ :” Այս բանը գրել վայելու է :”

Սարայ պատասխանեց. “Ոչ, այս բանը չգրենք : Վայելու է չէ որ նամակին մէջ փոքր եղբորս անառակութեանը վրայ Գէորգին բան մը ըսենք” :

Մր. Բոպինսոն ըսաւ. “Աղջիկս, ի-

րաւունք ունիս այդպէս խօսելու : Նամակ գրելու երրորդ կանոնն ալ ահա այս է . Նամակներու մէջ ընկերաց թերութեանը վերաբերեալ կամ անոնց ամբ ընտրող բաներ գրուելու չեն : Ո՛վ որ այս երեք կանոններուն զգուշութիւն կ'ընէ , կրնայ աղէկ նամակ գրել :

ՓՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Փայտի վրայ փորագրուած կաղապարէ թուղթի վրայ տպուած հնագոյն պատկերք 1423էն են : Սրբոյն Քրիստափորի պատկեր մը , Յիսուս մանկիկն ուսին վրայ , յիշեալ թուականին փորագրուած է , և փայտի վրայ փորագրուած առաջին պատկերը կը համարուի :

խատի : Փայտը որուն վրայ պատկերը պիտի փորագրուի՝ բարձկան մը վրայ կը հաստատուի , բայց որպէս զի պատկերին ամէն կողմը փորագրուի , փայտը դիւրութեամբ կրնայ դառնալ որ կողմ որ պէտք է : Նախ մատիտով պատկերը թուղթի մը վրայ կը գծագրուի : Ետքը փորագրիչը կ'առնէ մէկ մատնաչափ թանձր սոսախէ տախտակ մը , և որպէս զի տախտակին երեսին հարթութիւնը և փայլը երթայ , և պատկերը տախտակին վրայ մատիտով դիւրաւ գծուի , տախտակը չեչաքարով կը շփէ : Յետոյ տախտակին երեսը կը սպիտակացնէ , և թուղթին վրայ գծագրուած պատկերը տախտակին վրայ կը գծէ ուշադրութեամբ : Բայց տախտակին վրայ գծուած պատկերը թուղ

վան զի փայտին վրայ այն գիծերուն ընդ որտեքը կը փորուին : Մազի պէս բարակ շատ մը գիծերուն բոլորտիքը փորել , և բուն գիծերը չարել դիւրին չէ : Այն միջոցները միայն փորուած են որ պատկերին մէջ ճերմակ կ'երեւին : Այս արուեստին հմուտ անձինք շատ կը սիրեն իրենց արուեստը , քանզի իրենց հմտութեամբն այլ և այլ պատկերներ կը գծեն պարզ տախտակի վրայ :

Պատկեր մը փայտի վրայ որչափ և աղէկ փորուած ըլլայ , անոր գեղեցիկ կերպով տպուիլը տպագրողաց հըմտութենէն կախում ունի , վասն զի պատկերհանէն գծուած և փորագրչէն փորուած լրջագոյն գիծերը բայ , և թխագոյն գիծերը մութ ցուցնելու համար մեծ ուշադրութիւն պէտք է : Որպէս զի պատկերը պայծառ և գեղեցիկ երեւի , փորագրիչը պարտի վար իջեցնել կաղապարին այն կողմերը որ աւելի սեւ պիտի ըլլան , իսկ տպագրիչը տակը բան դնելով վեր վերցնելու է պատկերին այն մասերը որ աւելի սեւ պիտի ըլլան , և մեքենային աւելի քիչ կոխել տալու է պատկերին այն մասերուն վրայ որ աւելի բաց և պայծառ պիտի ըլլան :

Այս կէտին վրայ գալ ամիս կը խօսինք :

Պ Ո Պ

(Շար Աւետիսէի 9 Բուռն և վեր) Երբ Պոպ դունէն դուրս ելաւ , Լարի անոր հարցուց . «Միս կօթըս քեզի ի՞նչ տուաւ :


Պոպ պատասխանեց . «Միս կօթըս ինձի ուտելիք չտուաւ , ինձի տրուած բանէն դուն չես ախորժիր : Եթէ կը կարծես թէ Միս կօթըս ինձի ակա՞նակապ ոսկի մատանի մը տուաւ , գիտես որ մատանին չի բաժնուիր : Արդ , լուէ , չեմ ուզեր աւելի բան ըսել :

Լարի չկրցաւ բան մը հասկնալ Պոպի այս խօսքերէն , ուստի և ցաւեցաւ , բայց չբարկացընելու համար զՊոպ՝ աւելի բան չըսաւ :

Պոպ շատ խռոված էր , և զգալով որ պիտի չկրնար զինք բռնել , առանձին տեղ մը քաշուեցաւ , և Լարիի դառնալով ըսաւ . «Անհանգիստ եմ , կանգ առնե՞ք հոս :

Պոպ և Լարի նստան տեղ մը , և Պոպ ձեռուընկերովը երեսները ծածկելով սկսաւ լալ :

Լարի ցաւակցութեամբ հարցուց Պոպի . «Պոպ , ի՞նչ ունիս , ինչո՞ւ համար այդպէս խռովեալ ես :



1, 2, 3, փորող փորձիկներ : 4, Խաւարոց : 5, Բարձի մը և փորած քարտի մը

ՓՈՐԱԳՐՈՒ ԵՐ ԱՆ ԻՐ ԳՈՐԾՆԵՐԸ

Այս պատկերն Աւկապուրիկէն քանի մը մըն հեռու վանքի մը մէջ գըտնուեցաւ :

Փորագրչի մը սենեակը մտնողը կը տեսնէ որ արուեստագէտն աշուրները պայծառ լոյսէն պահելու համար ճակտին վրայ ծածկոցով , և մազի նման բարակ գիծերն աշուրներուն առջեւ բերելու համար խոշորացուցով կ'աշ

թին վրայ գծուած պատկերին հակառակն է :

Փայտի վրայ բան մը փորագրելու համար երեք տեսակ փորող գործիք կայ : Այս գործիքները փորուելու գիծերուն համեմատ տեսակ տեսակ են : Բաւական ճարտարութիւն պէտք է փորելու այն գիծերը որ պատկերին մէջ կը տեսնուին մէջէ մէջ գծուած ,

Պոպ նախ, «Չգիտեմ» ըսաւ, բայց յետոյ՝ զիջանելով լարիի թախանձանայ սկսաւ այսպէս պատասխանել. «Ան-ան-անակնկալ դէպք մը ե-կաւ զլու-խըս: Ե-ե-ես ան-կէ քող-ցըր խօս-քեր լը-սել կը յու-սա-յի: Բայց անի զիս սաստիկ ձեծեց, և հասկցուց ինձի թէ մարդ ձեծե-լու մասին վարպետ է:»

Պոպ այս խօսքերն ըսելէն ետքը սկսաւ դարձեալ սաստիկ լալ և ողբալ: Երբ Պոպ լալը դադարեցուց, կ'որի ըսաւ. «Ի՞նչ անպիտանութիւն, որի՞չ անգամ կիրակնօրեայ դպրոց չեմ երթար:»

Պոպ անոր պատասխանեց. «Լուէ, ի՞նչ կայ, ի՞նչ եղաւ, ես այսուհետեւ դարձեալ պիտի երթամ կիրակնօրեայ դպրոց և զքեզ ալ պիտի տանիմ: Միս կօթըս օգտակար դասեր կու տայ, ես ասոր նման կին մը երբեք տեսած չեի. զիս ձեծել անոր պարտքն էր, և աղէկ ձեծեց, բայց հոգ չէ:»

Պոպ ճամբան արտասուք սրբեց, բայց դէմքէն յայտնի էր թէ լացած էր: Երբ տուն եկաւ, հայրը հասկըցաւ որ Պոպ լացած էր, և խորհեցաւ թէ յանցանք գործած ու պատժուած էր, բայց բան մը չըսաւ տղուն:

Այն օրը Պոպ բողբոջին փոխուած էր: Վառարանին համար փայտ բերաւ, շատ աշխատեցաւ փոքր եղբայրները դրօսցնել, և տան մէջ քաղցրութեամբ և հանդարտութեամբ վարուեցաւ: Հայրը զարմացաւ այս յանկարծական փոփոխութեան վրայ, և մտքէն կ'ըսէր. «Տղան կիրակնօրեայ դասերէն շատ օգուտ քաղած է:» Արդարեւ Պոպ այն ձեծէն ետքը սկսաւ խելօք և քաղաքավարութեամբ վարուիլ, և դասի ատեն կը յարգէր զՄիս կօթըս:

Կ'ուրախանար տեսնելով որ յաջողած էր դեղեցիկ թուցիկ մը ունենալու, որ օդին մէջ շատ բարձր կ'ելլէր, բայց քիչ մը ետքը անոր ուրախութիւնը տրամաթեան փոխուեցաւ, փասն զի թուցիկը գնաց պիտակի ծառի մը պլուեցաւ և երկու կտոր եղաւ: Արդարեւ ցաւալի է որ այնչափ աշխատութեամբ շինուած խաղալիկ մը շուտով պատռի և բողբոջին անպիտան ըլլայ: Յարութիւն այս գէշութիւն վրայ ցաւելով սկսաւ լալ: Միթէ աւելի աղէկ չէր ըլլար որ այն պիտակի ծառը հոն չգտնուէր, և թուցիկն անոր պլուեելով չպատռէր: Ինչու համար է արդեօք որ աշխարհիս վրայ շատ ձախող դէպքեր կը պատահին և մեծամեծ փաստաց պատճառ կ'ըլլան: Այսպիսի ձախող դէպքեր մեծ վիշտ կը պատճառեն մարդոց:

Յարութիւն կը վշտանայ իր թուցիկին համար: Արդեակ, լալ կ'ուզես, լայ: Մարդիկ մխիթարելու համար Աստուծոյ շնորհուած միջոցներէն մին է լալ և արտասուել: Ինչպէս որ ամառնային գիշերները տեղացող ցօլերը ծաղկանց փոշիները կը սրբեն և անոնց կենդանութիւն կու տան, նոյնպէս արտասուք մխիթարութիւն և սփոփանք են մարդոց վշտացեալ սրտերուն:

Սակայն աղէկ չէ երկար ատեն արտասուք թափել: Հիմա արտասուք սրբէ, որդեակ, և ջանա թուցիկդ նորոգել:

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՅԱՅ ԴԱՍԵՐ

Պէտք չէ որ կիրակնօրեայ դպրոցաց մէջ կարդացուած Սուրբ Գրոց պատմութիւններն իրիւր լոկ պատմութեանց բուն նպատակը հասկնալու անհոգ ըլլար: Պօղոսի և Շիղայի բանտարկութեան պատմութիւնը շատ հետաքրքրական է, բայց այսչափ միայն չէ. այն պատմութիւնը կը սորվեցնէ երկու գլխաւոր բան, սյոնեքն կը սորվեցնէ թէ Աստուած կը պաշտպանէ իր ծառաները, և թէ անոք որ անկեղծութեամբ փրկութեան ճամբան կը փնտռեն՝ դիւրութեամբ կը գտնեն զայն:

ՀԱՆՆԵԼՈՒԿ

Խուրճանչիւր պատասխանին մէջ տեղի գիշերը զատ զատ առնելով բոլորն պատասխանը կը կազմեն:

Առաջին բառն աչքի հաճելի բանի մը կ'ըսուի:

Երկրորդ բառը Սուրբ Գրոց մէջ յիշուած կնոջ մը անունն է, զոր ետքը Աստուած փոխեց:

Երրորդ բառը շարժման մէջ եղող օդ կը ցուցնէ:

Չորրորդ բառը շատ մը մարդիկ կը ցուցնէ:

Հինգերորդ բառը կը ցուցնէ այն մարդուն անունը որ իսրայելացիները քանանու երկիրը տարաւ:

Վեցերորդ բառը կը ցուցնէ այն մարդը որ Աստուծոյ հին ժողովրդեան համար զոհ կը մատուցանէր, և այն ժողովրդեան հոգեւոր ղրուխն էր:

Եօթներորդ բառը կը ցուցնէ այն որ մեռած չէ:

Ութերորդ բառը կը ցուցնէ քրիստոնէական առաքինութեանց ամենէն մեծը:

Իններորդ բառը կը ցուցնէ այն բանը որ իսրայելացոց քանանու երկիրը երթալու ատեն ցորեկները կ'առաջնորդէր անոնց:

Բոլոր հանելուկն է քաղաքի մը անունը զոր Աստուած սիրեց:

ԱՆՑԵԱԼ ԱՄՍՈՑ ՀԱՐՑԱՄԱՅ ՊԱՏԱԹԵՆ ԽՈՏԱԿ, ԽՈՄԱՅԻԼ, ՅԱԿՈՐ, ԵՍԱՆ.

Ինչպէս որ ծովուն փրփուրները ժայռերուն վրայ կ'ելլեն և դարձեալ վարկ'ջնեն, բայց ժայռերն անասան կը մնան, նոյնպէս և ճշմարտութեան դէմ յարուցուած հալածանքը չեն կրնար խախտել ճշմարտութիւնը. վանդի ճըշմարտութիւնը յաւիտենական ժայռի մը նման է և բնաւ չիասանիր:

Ինչ որ կ'ընենք մեզի համար մեզի հետ կը կորսուի. ինչ որ կ'ընենք այլոց համար կրնայ մեր մահուանէն ետքն ալ մնալ. ինչ որ կ'ընենք Աստուծոյ համար յաւիտենական պիտի մնայ:

Մարդիկ մեր խօսքերէն կը դատեն մեր սիրտը, իսկ Աստուած մեր սրտերուն համեմատ կը դատէ մեր խօսքերը:

Ամերիկայի միսիսնարաց ընկերութեան կողմէն Խմբագիր ձ. Գ. ԿՐԻՆ Ֆիլիսթրալ եօզուշու, Ամերիկան Խան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. ՅԱԿՈՐ ՊՅԵԱՅԱՆ



ՊԱՏՈՍԱԹ ԹՐՈՒԹԻՎԸ
ԱՐՏԱՍՈՒՔ

Յարութիւն շատ օրեր աշխատելով, և բաւական ժամանակ և ստակ փտանելով, նոր թուցիկ մը շինած էր: Տղայիկն ուրախութեամբ առաւ իր թուցիկը, և զրօսնելու համար հրապարակը գնաց: Յարութիւն շատ